

Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքի իրացումը՝ որպես  
դարմանող անջատում (**remedial-secession**)

### Նախաբան

1991թ. Լեռնային Ղարաբաղը ինքնորոշման իրավունքի հիման վրա և միջազգային իրավունքի նորմերի խստագույն պահպանմամբ բնակչության կամքի ազատ արտահայտմամբ որոշում կայացրեց իրացնել իր ինքնորոշման իրավունքը և ստեղծել անկախ պետականություն:

Այդ իրավունքի իրացմանն ի պատասխան Ադրբեջանը՝

- 1992-94 թվականներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանը իրականացրեց ռազմական լայնածավալ ագրեսիա:
- 2016թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ իրականացրեց քառօրյա ռազմական ագրեսիա,
- 2020թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում իրականացրեց ադրբեջանական զինված ուժերի հարձակումը ՀՀ պետական սահմանի վրա,
- 2020թ. սեպտեմբերի 27-ից սկսած Թուրքիայի ռազմական տեխնիկայի /Ֆ-16 ուժերի, ԱԹՄ-ների և այլն/ ու ռազմական մասնագետների և Թուրքիայի միջոցով Ադրբեջան տեղափոխված ահաբեկչական խմբավորումների մասնակցությամբ իրականացնում է լայնածավալ ագրեսիա, որի ընթացքում խաղաղ բնակչության, Լեռնային Ղարաբաղի քաղաքների ու գյուղերի նկատմամբ կիրառվում են արգելված զինատեսակներ և ծանր հրթիռային հարվածներ, կոպտորեն ոտնահարվում են միջազգային իրավունքի նորմերը: Հատկապես այս ագրեսիան անհերքելիորեն վկայում է, որ Թուրքիայի աջակցությամբ, իսլամիստ ահաբեկչական խմբերի ներգրավմամբ Ադրբեջանը փորձում է ոչնչացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հայ բնակչությանը՝ ցեղասպանության միջոցով հասնելու համար իր ծավալապաշտական նպատակների իրագործմանը:

Այլևս ակնհայտ է, որ, ինչպես դա տեղի ունեցավ Արևելյան Թիմորում և Հարավային Սուդանում, Լեռնային Ղարաբաղում ևս ինքնորոշված ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովման միակ հնարավորությունը մնում է անկախության միջազգային ճանաչումը՝ որպես դարմանող անջատում (**remedial-secession**):

Գարմանող անջատումը չունի իրավական ձևակերպում, սակայն այն ինքնորոշման իրավունքի իրացման մասնավոր դեպք է, որը կիրառվում է ինքնորոշված պետությունների դեմ ռազմական ագրեսիայի հետևանքով առաջացած մարդասիրական աղետների և դրանց սպառնալիքների ժամանակ: Այդ մոտեցումը կիրառվել է, մասնավորապես, Արևելյան Թիմորում, Հարավային Սուդանում, Կոսովոյում և այլն:

## **1. Լեռնային Ղարաբաղի անջատման անթերիությունը միջազգային իրավունքի շրջանակներում**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության /ԼՂՀ/ ինքնորոշման գործընթացը իրականացվել է միջազգային իրավունքի նորմերի խստագույն պահպանմամբ: ԼՂՀ-ն, որպես ինքնորոշվող սուբյեկտ, բավարարում է միջազգային իրավունքով սահմանված հետևյալ բոլոր պահանջներին:

### **1.1. Կարո՞ղ էր Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կիրառել ինքնորոշման իրավունքը:**

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք է, որով պայմանավորվում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկի իրագործումը (ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ պարբերություն):

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի նույնակաբովանդակ 1-ին հոդվածները, արձանագրում են, որ *«Բոլոր ժողովուրդները ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:*

Միավորված Ազգերի կանոնադրության համաձայն Պետությունների բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված հռչակագրի (Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. [https://undocs.org/en/A/RES/2625\(XXV\)](https://undocs.org/en/A/RES/2625(XXV)), այսուհետ՝ Հռչակագիր) «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունք»-ին

նվիրված բաժինը սպառիչ սահմանում է ինքնորոշման իրավունքին առնչվող հիմնարար հարցերի լուծումները: Հռչակագիրը ևս մեկ անգամ ամրագրելով վերոհիշյալ ձևակերպումները, սահմանում է՝ «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության... Յուրաքանչյուր Պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ Կանոնադրության դրույթներին համապատասխան»:

Ակնհայտ է, որ Լեոնային Ղարաբաղի բնակչության բնիկ և մեծամասնություն /1921թ.-ին՝ 95 տոկոս, 1988թ.-ին՝ 75 տոկոս/ կազմող հատվածը՝ հայությունը բոլոր էական գծերով՝ լեզու, դավանանք, մշակույթ, որոշակի տարածքի վրա համատեղ կյանքի տևողություն, պատմական համատեքստում ընդհանուր ճակատագիր, մեկ ժողովրդի պատկանելու անհատական գիտակցում, դրա հետ կապված սեփական ինքնություն և այդ ինքնությունը պահպանելու կամք, քաղաքակրթական պատկանելություն և այլն, տարբերվում է Ադրբեջանի տիտղոսակիր ժողովրդից և այլ ժողովուրդ է, որը, ըստ վերոհիշյալ նորմերի, ունի ինքնորոշման իրավունք:

2007թ. մինչ այսօր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ իրականացվող բանակցային փաստաթուղթը՝ «Մադրիդյան սկզբունքները», արձանագրում է, որ Լեոնային Ղարաբաղի խնդրի լուծումը պետք է իրականացվի միջազգային իրավունքի երեք սկզբունքների հիման վրա, որոնցից մեկը ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքն է: Այդ բանակցությունների ընթացքում բազմիցս արձանագրվել է, որ կողմերը երեքն են, Ադրբեջան-ԼՂՀ և Ադրբեջան Հայաստան, որոնցից առաջին զույգի միջև գործում է տարածքային ամբողջականության սկզբունքը, իսկ երկրորդ զույգի պարագայում՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման: Քանի որ երեք կողմերից երկուսը ՄԱԿ անդամ պետություններ են, ապա ակնհայտ է, որ արձանագրված է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշման իրավունքը:

## **1.2. Ինքնորոշման իրավունք, թե՞ տարածքային ամբողջականություն:**

ՄԱԿ կանոնադրության հոդված 2-ի 4-րդ կետի համաձայն, վերոհիշյալ հռչակագրի սահմանումները պարզորոշ վկայում են, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն ճանաչված պետությունների (ՄԱԿ անդամ պետությունների) միջև հարաբերությունների կարգավորմանը:

Դա է արձանագրում նաև ՄԱԿ արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական որոշումը Կոսովոյի դեպքի վերաբերյալ<sup>1</sup>: Մասնավորապես, դատարանը նշում է՝ «Ընդհանուր միջազգային իրավունքը չի արգելում անկախության միակողմանի հռչակումները»<sup>2</sup> և «Տարածքային ամբողջականությունը գործում է միայն Պետությունների /ՄԱԿ անդամ/ միջև հարաբերությունների կարգավորման համար»<sup>3</sup>:

Ինքնորոշման իրավունքն ունի միջազգային իրավունքում բարձրագույն նորմի *jus cogens* և *erga omnes* /բոլորի համար համապարտադիր/ կարգավիճակ, ինչը Արդարադատության միջազգային դատարանը արձանագրել է Արևելյան Թիմորի, Պաղեստինի, Կոսովոյի դեպքերի վերաբերյալ որոշումներում:

### 1.3. Մեցեսիայի (օրինական անջատման) սահմանափակումները:

Ինքնորոշվող կողմի անկախության ճանաչման համար կա սուկ մեկ սահմանափակում: Այն հետևյալն է:

Կոսովոյի վերաբերյալ Արդարադատության միջազգային դատարանի որոշումը արձանագրում է, որ այն դեպքերում, երբ ՄԱԿ Անվտանգության խորհուրդը մերժել է անկախության միակողմանի հռչակումները /Հարավային Ռոդեզիա, Հյուսիսային Կիպրոս, Սրպսկա հանրապետություն/, պատճառը եղել է ոչ թե միակողմանիությունը, այլ այն, որ այդ հռչակումները իրականացվել են ուժի ապօրինի կիրառմամբ կամ ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի աղաղակող խախտումներով<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ Լեոնային Ղարաբաղի դեպքը նման սահմանափակում չունի: Ավելին, հենց Լեոնային Ղարաբաղի հանրապետությունն է երեք անգամ ենթարկվել լայնածավալ ռազմական ագրեսիայի՝ 1992-1994, 2016, 2020 թվականներին, ինչի արդյունքում զոհվել են և վիրավորվել հազարավոր բնակիչներ, այդ թվում զգալի թվով խաղաղ բնակիչներ, և պարզ է, որ Ադրբեջանը Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի օգտագործման խաղաղ փորձին տասնյակ տարիներ հակադրում է բնաջնջման փորձերը:

---

<sup>1</sup> (Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion of 22 July 2010, [2010] ICJ Rep. (Kosovo Advisory Opinion, <https://www.icj-cij.org/files/case-related/141/141-20100722-ADV-01-00-EN.pdf>)

<sup>2</sup> Նույն տեղում, para. 84

<sup>3</sup> Նույն տեղում, para. 80

<sup>4</sup> Նույն տեղում, para. 81

#### **1.4. Ինքնորոշման ձևերը և պայմանները:**

Համաձայն կողիֆիկացիոն բնույթ ունեցող Հռչակագրի «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունք»-ին նվիրված բաժնի 4-րդ կետի՝ *«ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միացումը կամ դրա հետ միավորումը, կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը, որն ազատորեն ընտրել է ժողովուրդը, այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն են»:*

Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը իր ինքնորոշման իրավունքն իրացրել է այս ձևակերպմանը լիակատար համապատասխանությամբ, քանի որ 1991 թվականի դեկտեմբերին անցկացվել է հանրաքվե, որին մասնակցել է բնակչության 82.2 տոկոսը, իսկ անկախությանը կողմ է քվեարկել մասնակիցների 99.89 տոկոսը: Երբեմն շահարկումներ են արվում, որ այդ հանրաքվեին Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակիչները չեն մասնակցել: Թեև պաշտոնական Բաքուն կոչ էր արել չմասնակցել, սակայն նրանց զգալի մասը մասնակցել է, քանի որ ըստ պաշտոնական տվյալների այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչության մոտ 25 տոկոսը ադրբեջանցիներ էին, իսկ հանրաքվեին մասնակցել է բնակչության 82.2 տոկոսը, ապա ակնհայտ է, որ դրանից առնվազն 7 տոկոսն ադրբեջանցիներ էին: Ավելին, եթե մնացածներն էլ մասնակցեին և դեմ քվեարկեին, ապա կողմ քվեարկողների թիվը միննույն է ավելի կլիներ, քան բնակչության թվի 80 տոկոսը:

Քանի որ քվեարկության էր դրվել ոչ թե անջատվելու և Հայաստանին միանալու տարբերակն, այլ անջատվելու և անկախ պետություն ստեղծելու՝ ապա դա ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը նպատակադրել էր ավելի մեծ հնարավորություններ ստեղծել ազգային փոքրամասնությունների՝ երկրի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման մասնակցության համար:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հանրաքվեին դիտորդական առաքելություն իրականացնելու հրավերներ էին ուղարկվել բազմաթիվ միջազգային կազմակերպությունների ու երկրների խորհրդարանների, և բոլոր մասնակցածները արձանագրել էին հանրաքվեի անթերի և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան անցկացումը:

**2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշումը որպես դարմանող անջատում (remedial secession)**

Ռազմական բախումներով ուղեկցվող էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորումը, որպես կանոն, տևական, տասնամյակներ ձգվող գործընթաց է: Այդ ընթացքում նախ փորձ է արվում խաղաղություն հաստատել, ապա հեղինակավոր միջազգային կազմակերպություններ ներկայացնող միջնորդների մասնակցությամբ և միջնորդությամբ կազմակերպվում են բանակցություններ՝ խնդրի կարգավորման համար՝ առաջին հերթին որոնելով հնարավորություններ երկու ժողովուրդների ինտեգրման և խաղաղ համակեցության համար: Թեև դեռևս չի հաջողվել այդ ճանապարհով կարգավորել որևէ ինքնորոշման հակամարտություն, սակայն բանակցությունները ունեցել են բացառիկ նշանակություն խաղաղության պահպանման և կարգավորման համար պայմաններ ստեղծելու տեսակետից: Այն դեպքերում, երբ զինված բախումները վերսկսվել են՝ սպառնալով վերածվել մարդասիրական աղետի (օրինակ, Կոսովո, Արևելյան Թիմոր, Հարավային Սուդան և այլն), միջազգային հանրությունը, համոզվելով, որ մետրոպոլիայի տիտղոսակիր ժողովրդի և ինքնորոշվող ժողովրդի համակեցությունը անհնարին է, կիրառել է պարտադրված լուծում՝ դարմանող անջատում (remedial secession), և ինքնորոշված պետությունը անդամակցել է ՄԱԿ-ին:

2.1. Լեռնային Ղարաբաղի դեպքում դարմանող անջատման (remedial secession) արդարացվածությունը:

- խորհրդային շրջան, դիտավորյալ հայաթափման և արհեստական աղբբեջանաբնակեցման քայլեր:

- խորհրդային շրջանում Սումգայիթում, Գյանջայում, Բաքվում և այլուր 1988-1990 թթ. հայերի նկատմամբ իրականացվեցին ջարդեր:

- 1991թ. խորհրդային զորքերի աջակցությամբ տեղահանվեցին 95% հայաբնակ Շահումյանի շրջանը և ևս 24 հայաբնակ գյուղեր:

- 1992-94թթ. ռազմական ագրեսիան ԼՂՀ-ի նկատմամբ,

- Այդ ագրեսիայից հետո կնքված 1994-1995թթ. Զինադադարի պայմանագրերը, որոնք Աղբբեջանը խախտում է պարբերաբար:

1994թ. զինադադարի առաջին պայմանագրով նախատեսվում էր, որ նույն թվականի մայիսի 12-ից կողմերը պարտավորվում են «ամբողջությամբ դադարեցնել կրակը և ռազմական գործողությունները»: Քանի որ այդ պայմանագրով նախատեսված ժամկետում (մինչև 1992թ. մայիսի 22) հնարավոր չեղավ կնքել համաձայնագիրը,

1994թ. հուլիսի 26-ին երեք կողմերը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան) պարտավորվել են «դադարեցնել կրակը և պահպանել կրակի դադարեցման ռեժիմը՝ **ընդհուպ մինչև քաղաքական մեծ Պայմանագրի կնքումը**, որը նախատեսում է ռազմական գործողությունների ամբողջական դադարեցումը»: Ի զարգացումն այդ համաձայնագրերի, 1995 թ. փետրվարի 4-ին պայմանավորվող երեք հակամարտող կողմերը (Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ և Հայաստան) «խաղաղ գործընթացի առաջխաղացման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով» կնքեցին Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում կրակի դադարեցման ամրապնդման վերաբերյալ: 1994-95թ. համաձայնագրերը գործող միջազգային իրավունքի փաստաթղթեր են և արգելում են բոլոր կողմերին ձեռնարկելու որևէ գործողություն դրանց բովանդակության դեմ՝ առավել ևս ռազմական ճանապարհով փորձելու լուծել որևէ խնդիր:

Չնայած համաձայնագրերի առկայությանն ու ուժի և ուժի կիրառման սպառնալիքի օգտագործման արգելքին՝ սահմանված միջազգային իրավունքի բազմաթիվ նորմերով, Ադրբեջանը շարունակաբար խախտում է հրադադարը, իսկ 2016թ. Ադրբեջանը իրականացրեց ռազմական ագրեսիա ԼՂՀ-ի նկատմամբ:

2016 թ. ապրիլին Ադրբեջանը փորձեց հրաժարվել 1994թ. Զինադադարի համաձայնագրից՝ փորձելով դա ներկայացնել որպես Հայաստանի կողմից չեղարկված: Միաժամանակ փորձ է արվել 2016թ. ապրիլի 5-ի երկկողմանի զինադադարի (Հայաստան և Ադրբեջան) բանավոր համաձայնությունը ներկայացնել որպես զինադադարի միակ իրավական հիմք: Ի պատասխան դրա, 2016թ. Ռուսաստանի Դաշնությունը ԵԱՀԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությանը ուղղված նոտայում վճռականորեն ընդգծել է, որ 1994-95 թթ. համաձայնագրերը «ունեն անժամկետ բնույթ և նախկինի պես հանդիսանում են զինադադարի հիմք»: Այն ամբողջությամբ համապատասխանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների միասնական դիրքորոշմանը:

-2020թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի անմիջական աջակցությամբ և մասնակցությամբ Ադրբեջանի լայնածավալ ռազմական ագրեսիան Լեռնային Ղարաբաղի դեմ

- Ահաբեկիչների և այլ պետության՝ Թուրքիայի ներգրավում,
- Զինատեսակներ,
- Քաղաքների և գյուղերի խաղաղ բնակչության հրթիռակոծումներ,

-Անթույլատրելի զինատեսակների կիրառում:

Նշված բոլոր փաստերը վկայում են, որ Արցախի Հանրապետության նկատմամբ առկա են դարմանող անջատման բավարարար հիմքերը:

2.2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխանությունը Մոնտեվիդեոյի կոնվենցիային՝ որպես կենսունակ պետություն:

Մոնտեվիդեոյի կոնվենցիայի Հոդված 1-ն ամրագրում է պետության կենսունակության հավաստման հետևյալ չափանիշները. «Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»<sup>5</sup>:

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները Կոսովոյի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեպքերի համար

Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված հատկանիշներ	Կոսովոյի Հանրապետություն	Արցախի Հանրապետություն
Մշտական բնակչություն	2011թ. մարդահամար – 1.739.825 մարդ 2015թ. – 1.870.981 մարդ	1989թ. խորհրդային վերջին մարդահամար – 189.100 մարդ 1995թ. հետկոնֆլիկտային ժամանակաշրջան – 122.600 մարդ 2005թ. մարդահամար – 137.700 2015թ. մարդահամար – 151.161 մարդ

<sup>5</sup> Montevideo convention on the rights and duties of states, <http://www.oas.org/juridico/english/sigs/a-40.html>



<p><b>Սահմանված տարածք</b></p>	<p>10.908 կմ<sup>2</sup></p>	<p>11.458 կմ<sup>2</sup></p> <p>Տարածքի հարցը դեռևս բանակցությունների օրակարգում է</p>
<p><b>Կառավարություն</b></p>	<p>2008թ. ի վեր «հետժամանակավոր արտաքին կառավարման համախտանիշ»</p> <p>Ոչ արդյունավետ կառավարում</p> <p>Անգամ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ջանքերը բավարար չէին, որպեսզի Կոսովոն, գտնվելով Եվրոպայի՝ ժողովրդավարության բնօրրանի, կենտրոնում, դադարեր լինել բնօրրան այնպիսի անօրիական գործունեության համար, ինչպիսիք են թմրանյութերի, զինամթերքի ապօրինի վաճառքը, թրաֆիքինգը:</p>	<p>Իրականացնում է պետության կառավարումն անկախության հռչակումից ի վեր, մինչ այժմ ունեցել է ընտրված 4 նախագահներ</p> <p>25 տարի արդյունավետ ժողովրդավարական կառավարում</p>

<p><b>Այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատման կարողություն</b></p>	<p><u>Ճանաչվել է 114 պետության կողմից</u></p> <ul style="list-style-type: none"> <li>• 110 – ՄԱԿ անդամ պետություն</li> <li>• 4 – ոչ անդամ պետություն</li> </ul> <p>Դիվանագիտական առաքելություններ – 25</p> <p>Հյուպատոսական առաքելություններ- 27</p>	<p><u>Չի ճանաչվել ՄԱԿ անդամ պետությունների կողմից</u></p> <p><u>Ճանաչվել է հետխորհրդային տարածքի 3 չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կողմից</u></p> <p>Մշտական ներկայացուցչություններ՝</p> <p>ՀՀ</p> <p>ԱՄՆ</p> <p>ՌԴ</p> <p>Ֆրանսիա</p> <p>Գերմանիա</p> <p>Ավստրալիա</p> <p>Մերձավոր Արևելքի երկրներ /գտնվում է Լիբանանում/</p>
--	--	--

